ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 1527-Ն	*Տեսակը*	Պաշտոնական Ինկորպորացիա
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2015.12.25/90(1179) Հոդ.1182	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	24.12.2015
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	24.12.2015
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	04.01.2016	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԻՐԵՆՑ ԸՆՏՐԱԾ ԲՈՒԺՈՂ ԲԺԻՇԿՆԵՐԻՆ ԿԱՄ ԱՅԼ ԲԺԻՇԿ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ ՈՐՊԵՍ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբերի 2015 թվականի N 1527-Ն

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԻՐԵՆՑ ԸՆՏՐԱԾ ԲՈՒԺՈՂ ԲԺԻՇԿՆԵՐԻՆ ԿԱՄ ԱՅԼ ԲԺԻՇԿ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ ՈՐՊԵՍ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(վերնագիրը փոփ. 25.03.21 N 396-Ն)

(որոշումն ուժը կորցնում է մասնակի 2023 թվականի փետրվարի 1-ից՝ համաձայն 28.07.22 N 1180-Ն որոշման 6-րդ և 7-րդ կետերի, բացառությամբ բժշկասոցիալական վերափորձաքննության դրույթների և մինչև 2023 թվականի փետրվարի 1-ը բժշկասոցիալական փորձաքննության համար դիմած անձանց մասով, որոնք գործում են մինչև 2024 թվականի հունվարի 1-ը)

Հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել միասնական սոցիալական ծառայությունների կողմից իրականացվող փորձաքննություններին փորձաքննություն անցնող անձանց կողմից իրենց ընտրած բուժող բժիշկներին կամ այլ բժիշկ մասնագետներին որպես ներկայացուցիչ ներգրավելու կարգը՝ համաձայն հավելվածի։

(1-ին կետը փոփ. 25.03.21 N 396-Ն)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Հ. Աբրահամյան

2015 թ. դեկտեմբերի 24
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
դեկտեմբերի 24-ի N 1527-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԻՐԵՆՑ ԸՆՏՐԱԾ ԲՈՒԺՈՂ ԲԺԻՇԿՆԵՐԻՆ ԿԱՄ ԱՅԼ ԲԺԻՇԿ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ ՈՐՊԵՍ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ

(վերնագիրը փոփ. 25.03.21 N 396-Ն)

1. Սույն կարգով կարգավորվում են միասնական սոցիալական ծառայությունների կողմից իրականացվող փորձաքննություններին փորձաքննություն անցնող անձանց կողմից իրենց ընտրած բուժող բժիշկներին կամ այլ բժիշկ մասնագետներին որպես ներկայացուցիչ ներգրավելու հետ կապված հարաբերությունները:

(1-ին կետը փոփ. 25.03.21 N 396-Ն)

2. Միասնական սոցիալական ծառայության կողմից իրականացվող փորձաքննություններին փորձաքննվող անձանց կողմից իրենց ընտրած բուժող բժիշկներին կամ այլ բժիշկ մասնագետներին որպես ներկայացուցիչ ներգրավելու հնարավորության մասին փորձաքննվող անձը կամ նրա օրինական ներկայացուցիչն իրազեկվում է բժշկասոցիալական փորձաքննության դիմումը ներկայացնելիս:

(2-րդ կետը փոփ. 25.03.21 N 396-Ն)

3. Միասնական սոցիալական ծառայություն դիմելուց հետո եռօրյա ժամկետում փորձաքննվող անձը կամ նրա օրինական ներկայացուցիչը միասնական սոցիալական ծառայությանը տրամադրում է (գրավոր և (կամ) էլեկտրոնային փոստով և (կամ) հեռախոսազանգով) իր ներկայացուցչի տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, պաշտոնը, մասնագիտացումը, աշխատանքի վայրը, մշտական բնակության վայրի հասցեն, հեռախոսահամարը):

(3-րդ կետը փոփ. 25.03.21 N 396-Ն)

4. Բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ փորձաքննվող անձի ներկայացուցիչն ունի օրենքով իրեն վերապահված իրավունքներ և պարտականություններ:

5. Փորձաքննվող անձի ներկայացուցչի մասնակցությունն անձի փորձաքննությանը գրանցվում է այդ նպատակի համար նախատեսված լիազոր մարմնի կողմից հաստատված գրանցամատյանում և ստորագրվում նրա կողմից:

(հավելվածը փոփ. 25.03.21 N 396-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Դ. Հարությունյան